

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Տասնյակ դարերի դժվարին, բայց և փառավոր ուղի անցած մեր լեզուն XXI դարի շեմին իր զարգացման ամենաբարձր աստիճանում դարձավ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պետական լեզու։ Հայոց լեզվի զարգացումը մինչ այդ արդեն ապահովված էր առհասարակ լեզվի զարգացմանը և վարդապետությանը ներկայացվող երկու հիմնական չափանիշներով՝ գործառական և կառուցվածքային։ Հայերենի գործառական զարգացումը պայմանավորված է ազդային կյանքի բազմոլորտ ու հարուստ բովանդակությամբ։ Գրական հայերենի զարգացման համար 1990-ական թթ. նախորդող սոսնամյակները գործառական լայն հնարավորություններ են ընձեռել, Չանդրադառնալով այդ շրջանի՝ խորհրդային տասնամյակների հետ կապված լեզվական վիճահարույց որոշ հարցերի՝ նշեմ, որ այդ տասնամյակներում շարունակեց զարգանալ մինչ այդ արդեն զարգացման բարձր աստիճանի հասած ղեկավարական ղրականության և հրապարակախոսության, հայագիտության տարրեր ճյուղերի լեզուն, այլև այն ձեռք բերեց նոր գործառություններ՝ սպասարկելու համար պետական, քաղաքական գործունեությունը, իրավաբանությունը, բնական ու ճշգրիտ գիտությունների որոշ ճյուղեր, արվեստի նոր բնագավառներ և այլն։ Գործառության ընդլայնումը, ինքնին արդեն կարևոր լինելով հանդերձ, միաժամանակ հիմք է դառնում, լայն հնարավորություններ է ստեղծում լեզվի հարստացման ու կառուցվածքի զարգացման գործում։ Լեզվի զարգացման հնարավորությունների թվում հիշենք նաև միջնակարգ ու բարձրագույն դպրոցի լայն ցանցի ստեղծումը, գրքերի բազմատպաքանակ հրատարակությունները, զանգվածային լրատվական միջոցների առկայությունը, դիտական հաստատությունների, այդ թվում նաև տեղեմիայի բազմաճյուղ համակարգը։ Այս բոլորը գրական լեզվով սպասարկվելու պահանջ էին ներկայացնում, որ նշանակում է նաև հարստացման ու զարգացման խթան էին հանդիսանում։

Նշված շրջանում հայերենը համարվեց, հարստացավ շուրջ 30.000 բառով, որոնց մի ղղալի մասը գիտության, տեխնիկայի, մշակույթի տարբեր բնագավառների, մեր հասարակական կյանքի այլևայլ ոլորտներին վերաբերող տերմիններ են։ Այս իրողությունը խոսում է բառապաշարի հարստացման, լեզվի զարգացման ոչ միայն քանակական կողմի մասին, այլև վկայում է նրա առավել ինտելեկտուալացումը, նոր տեղաշարժերի որակական բնույթը։ Գրական լեզվի կատարելության, զարգացածության չափանիշներից է լեզվի օրինաչափությունների զարգացումն ու կայունացումը, ընդհանրականացման, միասնականացման իրողությունները, շեղումների, բացառությունների նվազումը։ Գրական հայերենը ուղղախոսական, քերականական կառուցվածքի, իմաստաբանական օրինաչափությունների, բառակազմական կաղապարների զարգացման ու կայունացման բնագավառներում մեծ առաջընթաց է ապրել։ Նշված տասնամյակներում հայերենի զարգացման հարցում եղել են նաև տարընթացություններ, սահմանափակումներ՝ հիմնականում պայմանավորված նախկին Միությունում իշխող ազգային քաղաքականությամբ, որի հիմնական խնդիրներից մեկը ռուսերենի լայն տարածումն էր։ Ռուսերեն

կրթությունը դպրոցներն աճում էին ի հաշիվ հայկականի, գործառական որոշ ոլորտներում (պետական-կառավարական, գիտության առանձին բնագավառներ) հայերենի գործառույթը լիաժամակ չէր, այլ զգալի չափով սահմանափակ էր: Հայերենի կանոնարկման բնագավառում, ցավոք, թույլ են տվել որոշ սխալներ, որոնք հետագայում, բարեբախտաբար, վերանայվել են լրիվ կամ մասնակիորեն: Օրինակ, 1922 թ. ուղղագրական որոշումը, որով լրիվին մերժվեց ուղղագրության ավանդականության սկզբունքը, չէր բխում հայերենի շահերից, վերանայվել և ուղղվել է 1940 թ., վերականգնվել են է օտառները իրենց որոշակի գործածությամբ: Տերմինաբանության հարցում թույլ են տրվել հատկապես քաղաքական տերմինների օտարաբանության դեպքեր, որոնք հետագայում՝ սկսած 1960-ական թթ. հիմնականում վերանայվել են: Այս սահմանափակումներով, շեղումներով, տարբերացություններով հանդերձ՝ հայոց լեզուն նշված տասնամյակներում շարունակել է զարգանալ և հասել է զարգացման ու կատարելագործման բարձր աստիճանի:

Դեպի ապագան տանող ուղիով վստահ քայլելու և ապահով անցնելու համար մենք պարտավոր ենք իմանալ, որ մեր ապագան կառուցում ենք այսօր, և նրա ուղին անցնում է ոչ միայն ներկայի, այլև անցյալի միջով: Ուրեմն սթափ հայացքով նայենք մենք նաև անցյալին՝ որոշելու համար՝ ի՞նչ ենք բացարձակ մերժել ու մերժում. ի՞նչ սխալներ ենք թույլ տվել, որոնք կարելի էր թույլ չտալ, ուրեմն և այսուհետև թույլ չտանք. ի՞նչ արժեքներ ենք ստեղծել, որոնք պետք է պահպանենք: Մեր ապագա գործերը շատ բանով պայմանավորված են այս երեք հարցերին տված մեր պատասխանի բանիմացությունից ու անկեղծությունից և ըստ այդմ գործելուց:

Հայոց լեզվի վերահիշյալ նվաճումները տեղի են ունեցել մի ժամանակաշրջանում, երբ մեր ժողովուրդը շունչ էր բացարձակ անկախություն, և հայկական պետությունը մտնում էր մեկ ընդհանուր պետականության կազմի մեջ: Մեր ժողովուրդի պատմական զարգացման արդի փուլում, երբ մեր անկախությունն իրավաբանորեն լիարժեք է, վարչական, իրավական կախման մեջ չենք որևէ պետությունից, և մեր ներքին, ազգային հարցերը կախված են մեզնից, ու մենք պետք է տնօրինենք, — հայոց լեզուն զարգանում է առարկայորեն նպաստավոր պայմաններում՝ իրացնելու իր ներքին մեծ հնարավորությունները: Այս հարցում մենք ունենք որոշակի առաջընթաց քայլեր: Այս առաջընթացը որքանո՞վ է լիարժեք և որքանո՞վ կլինի լիարժեք. դա կախված է մեզնից, մեր դիրքորոշումից, մեր վերաբերմունքից:

Ինչպես նշվեց վերը, լեզվի զարգացումը երկու կողմ ունի՝ գործառական և կառուցվածքային: Գործառական ոլորտին վերաբերող քայլերից են՝ լեզվի մասին օրենքի ընդունումը, հայոց լեզուն պետական լեզու հռչակելը, նրա գործառական ոճերի ընդլայնումն ամբողջ ծավալով: Լեզվի լիաժամակ գործածությունը, ինքնին կարևոր նվաճում լինելով, հիմք է դառնում նաև լեզվի կառուցվածքային զարգացման, բառապաշարի հարստացման, նրա օրինաչափությունների ծավալման ու կայունացման գործում: Մնում է ճիշտ և նպատակային օգտագործել այդ հիմքը, այդ առարկայական հնարավորությունը և առավելադույնս նպաստել լեզվի հարստացմանն ու զարգացմանը:

Դրական տեղաշարժերի առումով պետք է նշել հատկապես պետական-վարչական և հրապարակախոսական ոճերի նկատելի առաջընթացը՝ պայմանավորված պետական, սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքում կատարված ու կատարվող փոփոխություններով, հրապարակախոսության առջև ծառացած նոր խնդիրներով, ինչպես և հատկապես լրատվական միջոցների բազմազանությամբ: Անդրադառնալով մասնավորապես հրապարակախոսական ոճին՝ նշենք, որ լեզվի և նրա զարգացման հիմնական պատկերը ամենից շատ արտացոլվում է մամուլում, որը ներկայացնում է պետական, քաղաքական, տնտեսական, մշակութային և առհասարակ հասարակական կյանքի բոլոր բնագավառները: Արտալեզվական այս իրողությունների և լեզ-

վի փոխհարաբերությունը կարևոր է դիտարկել ոչ միայն նրա զարգացման արդյունքների առումով, այլև որպես լեզվի զարգացման ազդակ, խթան:

Լեզվի կառուցվածքային տեղաշարժերը, բնականաբար, ավելի դանդաղ են ընթանում, քան գործառականը: Կառուցվածքային զարգացման մեջ ամենից շատ փոփոխություններ կատարվում են բառապաշարում, մասնավորապես տերմինաբանության բնագավառում: Ահա վերջին շրջանում մեր լեզվի մեջ մտած ալգայիսի տերմիններ, որոնք կամ նոր են կազմվել, կամ նոր են լայնորեն դործածվում, կամ էլ նոր են ձևեր բերել տերմինային արժեք. ամբողջատիրություն, ալլոնտրանք, աշխարհաքաղաքական, ապապետականացում, դոմազդ, դաշնություն (ֆեդերացիա), գաշնային, դասիչ, երկրաշարժաբանություն, ժողովրդավարություն, խորհրդարան, խորհրդարանական, համադաշնություն (կոնֆեդերացիա), համակարգիչ (կոմպյուտեր), հիմնադրամ, հռակագիր, միջխորհրդարանական, մշակութաբանություն, նախարար, շարժերնիս (դինամիկա), ռազմավարություն, վարչապետ, տարածաշրջան, տարածաշրջանային, տարանցիկ (տրանզիտ), փորձագետ, քաղաքագետ (պոլիտոլոգ), քաղաքագիտություն (պոլիտոլոգիա) և այլն:

Հայերենի տերմինային համակարգը համարվում է նաև բառակապակցություններով. ինչպես՝ ազգային ժողովի վերահսկիչ պալատ, շուկայական հարաբերություններ, շուկայական տնտեսություն, բաժնետիրական բանկ, բաց բաժնետիրական ընկերություն, մասնակի անհատույց սեփականաշնորհում, մեկնարկային գին, բաց բաժնետիրացում, փակ բաժնետիրացում, ապրանքների միջազգային գծիկավոր կոդ, բանկային իրավաբանների միություն, ձևակերպության միջազգային ակադեմիա, միջխորհրդարանական համադորձակցության համաձայնագիր, միջազգային խաղաղարար ուժեր և այլն:

Հայերենի տերմինային համակարգը հարստանում է նաև լեզվի մեջ եղած բառերի իմաստի ընդլայնման, որևէ իմաստի տերմինացման միջոցով: Իմաստային ալգայիսի նորաբանություններից են՝ անջատական (ներ) (սեպարատ, սեպարատիստ), ընդդիմություն (օպոզիցիա), համակարգող (կոորդինատոր), միջանցք (օր.՝ Գրողնու արևելյան ծայրամասում հազարավոր գաղթականներ սպասում են միջանցքի բացմանը՝ տեղափոխվելու համար): Այս վերջին իմաստով ավելի շատ դործածվում է մարդասիրական միջանցք բառակապակցությունը, որն ստացել է տերմինային արժեք:

Հայերենի զարգացման արդի փուլի կապակցությամբ նշենք նաև ոճական միջոցների, ոճական հնարավորությունների լայն, անկաշկանդ իրացումը, որը թարմություն է մտցնում հրապարակախոսական, մասնավորապես լրագրային ոճում:

Ցավալի է, որ վերջին շրջանի բառական նորաբանությունների մեջ կան նաև անհաջող կազմություններ: Մանավանդ տերմինների հարցում դա անհանդուրժելի է, քանի որ տերմինի իմաստային ճշտությունը, որը պայմանավորված է կազմության ճշտությամբ, կարևոր ու պարտադիր պայման է: Կազմության և դրանով իսկ իմաստային ճշտության պայմանը չապահովելու դեպքում տերմինը կամ կլինի անհասկանալի, կամ կարտահայտի սխալ իմաստ: Իսկ եթե տվյալ տերմինն իր հաղորդակցային կարևոր դերի պատճառով հաճախակի է գործածվում, նշանակում է՝ դրանով իսկ տարածվում է սխալը: Այսպիսի բառերից է սեփականաշնորհում (սեփականաշնորհել) բառը, որն անհաջող է երկու պատճառով: Շնորհում բառը հայերեն նշանակում է նվիրում, նվիրաբերում, նրանում չկա վաճառք իմաստը, մինչդեռ, այսպես կոչված, սեփականաշնորհման գործողությունը իրականում կատարվում է վաճառքի միջոցով: Երկրորդ՝ սխալ է սեփական բաղադրիչն այս բառի մեջ: Բանն այն է, որ կան սեփականության տարբեր ձևեր՝ պետական, կոոպերատիվ, մասնավոր: Սեփականաշնորհում բառից չի հասկացվում թե որ սեփականության մասին է խոսքը, բոլորովին այլ բան է, որ մենք գործածության որոշակի պայմաններից, խոսքային իրադրությունից ենթադրում ենք բառի իմաստը: Մինչդեռ տերմինի իմաստը ոչ թե պետք է

ենթադրաբար հասկացվի, այլ պետք է միանշանակ ճշգրիտ արտահայտվի: Այլապես, եթե այլ պայմաններում մասնավոր անձինք իրենց սեփականությունը վաճառեն պետությանը, սա նույնպես այդ միևնույն տրամաբանությունով կարող է կոչվել «սեփականաշնորհում», միայն թե այս դեպքում պետք է հասկանալ, որ խոսքը վերաբերում է ոչ թե մասնավոր, այլ պետական սեփականությանը: Այսպիսով՝ ճիշտ կլիներ, որ մենք ունենայինք հետևյալ երեք հասկացություններ՝ պետական սեփականության մասնավորեցում, մասնավոր սեփականության պետականացում, որևէ սեփականության կոոպերացում: Ի դեպ, սեփականության տարբեր ձևերի հետ առնչվող այսպիսի տերմինազգծության դեպքում ապահովվում է նաև այդ խմբի տերմինների համակարգայնությունը, որը տերմինաշինությանը ներկայացվող կարևոր պայման է:

Անհաջող, արհեստական կազմություն է գազաքննաժողով բառը, որ գործածվում է «պետությունների ղեկավարների ժողով» իմաստով: Այս իմաստի համար մենք ունենք շատ հարմար բառ՝ վեհաժողով, որ գործածական է գրական հայերենի երկու ճյուղերում հենց այդ իմաստով, տեղ է գտել հայերենի բացատրական բոլոր մեծ բառարաններում: Այն հանգամանքը, որ վեհաժողով-ի բացատրությունից հետո որոշ բառարանագիրներ նշում են կոնգրես բառը՝ որպես միջազգային համարժեք, չի արդարացվում: Վեհաժողով-ը և կոնգրես-ը համարժեք չեն: Կոնգրես բառը ծագում է լատիներեն կոնգրեսուս բառից, որ նշանակում է «հանդիպում, ժողով»՝ առավելապես միջազգային՝ անկախ մասնակիցների պաշտոնականությունից: Օրինակ՝ խաղաղության կողմնակիցների միջազգային կոնգրես, որն իր մասնակիցների կազմի պատճառով բնավ վեհաժողով չէր կարող կոչվել և չի կոչվել: դա կարելի է հայերեն համարել համաժողով: Այնպես որ իմաստով իրար համարժեք են գազաքննաժողով-ը և վեհաժողով-ը, որոնցից ավելի հարմար է ընդունել վեհաժողով-ը՝ իր դուրահնչությամբ, կարճությամբ, տարածվածությամբ:

Համառոտակի ուզում ենք անդրադառնալ խոսնակ բառի տերմինային նոր իմաստի հատկացմանը: Խոսնակ-ը արևմտահայերենում գործածվում է հատկապես «ռադիոյի հաղորդավար» իմաստով, որ հասկանալի է ու տրամաբանական: Այդ բառը գործածվում է նաև արևելահայերենում հատկապես փոխաբերական իմաստներով: Վերջին շրջանում լրատվական միջոցներում խոսնակ բառը երբեմն գործածվում է «ազգային ժողովի խոսնակ» (նախագահ իմաստով) կապակցության մեջ: Կազմվել է նաև փոխխոսնակ՝ փոխնախագահ իմաստով: Ի՞նչ կապ ունի այս իմաստը այդ բառի բուն իմաստը ներկայացնող «ռադիոյի հաղորդավար» իմաստի հետ: Ո՛չ մի կապ:

Ամենայն հավանականությամբ խոսնակ բառին հատկացված «նախագահ» նոր իմաստը հետևյալ ծագումն ունի: Անգլերենի սպիկեր բառը, որ բառացի նշանակում է «խոսող», «ճարտասան» և որով անվանվում է Անգլիայի (և անգլիալեզու որոշ երկրների) խորհրդարանի ստորին պալատի նախագահը, նմանակությամբ հիմք է դարձել խոսնակ բառին այդպիսի իմաստ տալու հարցում: Ուրեմն, խորհրդարանի կամ նրա պալատի ղեկավարը խոսնակ բառով անվանելու հարցում դեր է կատարել ոչ թե խոսնակ-ի հայերեն իմաստը, այլ սպիկեր-ի տերմինային իմաստը: Վարչական, պաշտոնական որևէ տերմին (կամ առհասարակ որևէ բառ) մի այլ բառով կարելի է փոխարինել միայն այն դեպքում, եթե գործածության մեջ եղող բառը կամ օտարաբանություն է, կամ հայերեն անհաջող կազմություն և տարածում չի գտնում: Այս պարագայում այդպիսի կամ նման որևէ պատճառ չկա: Պարզապես, ըստ երևույթին, ոմանց դուր է եկել, որ խոսնակ բառը իր կազմությամբ հիշեցնում է օտար սպիկեր-ին:

Կարելի էր ավելի մանրամասն ներկայացնել որոշ նորաբանություններ, կանգ առնել նրանց կառուցվածքային, իմաստային, կիրառական թերությունների վրա: Դրանք ավելի շատ մասնակի բնույթ են կրում:

Նա ավելի հանգամանորեն եմ ուզում կանգ առնել լեզվական այնպիսի երևույթների, իրակությունների վրա, որոնք տեղ են գտնում մեր լեզվում, բայց չեն բխում լեզվի էությունից, լեզվի բնականոն զարգացման արդյունք չեն և ըստ էության չեն նպաստում, այլ, կարելի է ասել, խոչընդոտում են նրա զարգացմանը: Թվում է, թե մեր ազգային լեզվի մաքրության համար վերջին տարիների շատ հետևողական պայքարից հետո և պայքարի արդյունքում մենք չպիտի առիթ ունենայինք խոսելու առկա օտարաբանության, առավել ևս օտարամոլության մասին: Բայց այսօր առկա է ոչ թե սոսկ առիթ, այլ անհանգստանալու շատ հիմնավոր պատճառ: Մեր հանրապետության լրատվության միջոցներում, հատկապես լրագրերում, մեծ չափերի են հասնում առատորեն ներմուծվող օտար բառերը Արևմուտքից, հատկապես անգլերենից (ամերիկյան): Ահա օրեցօր մեծացող օտարաբանությունների մի խումբ. անիմացիա, բրիկետ, դեպոզիտ, դիզայն, դիզայներ, դիվիզենտ, էմբարգո, էմիտենտ, էպիլյացիա, էքստերիեր, իմիտացիա, իմպիւմենտ, ինտերիեր, լեզիտիմ (ոսթյուն), լոբինգ, կադաստր, կազինո, կոլաժ, կոմերցիա, կոմերցիոն, կոմֆորմիզմ, կոմֆորմիստ, կոնսորցիում, կոնֆլիկտոլոգիա, մարկետ, մարկետինգ մենեջեր, մոնիտորինգ, նեոգլոբալիզմ, շոու, շարտեր (ային), պլյուրալիզմ, ռեյտինգ, սինդրոմ, սուբսիդիա, սուրլիմացիա, սուպերմարկետ, մենտալիտետ, քվոտա և այլն:

Այս և այլ օտարաբանությունների հանգամանալից քննությունը դուրս է սույն հոդվածի խնդիրներից, այնուամենայնիվ նշեմ. հայերենն այնքան աղքատ չէ թե՛ բառապաշարով, թե՛ բառակազմական հնարավորություններով, որ անկարելի լինեի այսօր ունենալու այդ օտար բառերի մեծագույն մասի աղղալին համարժեքները: Պարզապես մտահոգություն չի եղել՝ պահպանելու մայրենի լեզվի անաղարտությունը: Վերջապես, եթե անհատ թարգմանչի, լրագրողի կամ սլաշտոնատար անձի համար այսպիսի հարցերը միայնակ լուծելը դժվար է, ապա կարելի էր դիմել իրավասու մասնագիտական կազմակերպություններին՝ Ակադեմիայի լեզվի ինստիտուտին, լեզվի պետական տեսչությանը և այլն:

Խոսքն այն մասին չէ, թե առհասարակ չի կարելի փոխառություն կատարել, այլ այն մասին է, որ փոխառությունը պետք է կատարվի խիստ անհրաժեշտության դեպքում: Դեռևս 1955 թ. Հայաստանի կառավարությանն առընթեր տրամիշնաբանական կոմիտեի որոշումով օտար բառի փոխառությունը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե տվյալ բառի իմաստն արտահայտող հայերեն բառ չունենք կամ հնարավոր չէ հաջողությամբ կազմել այդպիսին: Իրողությունն այն է, որ բերված բառերի մեծ մասի իմաստը հնարավոր է արտահայտել հայերեն: Մի՞թե օֆիս բառի իմաստը չի արտահայտում մեր գրասենյակ բառը: Լեզիտիմություն իմաստը կարելի է արտահայտել օրինակաւորութիւն բառով, կոնֆլիկտոլոգիա-ն՝ բախումնաբանութիւն, Լմբաբոլո-ն՝ առգելի բառով և այլն: Վերջին շրջանում երբեմն զործածվում են վերջին երկու հայերեն ձևերը:

Անհասկանալի ու տարօրինակ է, որ վերջին տասնամյակներում կատարված փոխառությունների դեմ հետևողականորեն պայքարող անձինք ըստ էության անտարբեր են նորագույն օտարաբանությունների, այլև օտարամոլության նկատմամբ: Լեզվական մի ինքնատիպ ու ցավալի օտարամոլություն վերջին շրջանում է ծնունդ առել ու տարածվել մեզանում: Խոսքը վերաբերում է մեր մայրաքաղաքի, ալլ քաղաքների, մարզկենտրոնների, նախկին շրջակենտրոնների փողոցներում, խանութների, շենքերի անգլերեն ցուցանակներին, գովազդներին, այլ կարգի ազգերին՝ ձևավորված գունազեղ, տպավորիչ ոճով: Շատ դեպքերում հայերենը չկա, ձևավորումը միայն անգլերեն է:

Եթե մեր մայրաքաղաքին անձանոթ մեկը հայտնվի նրա որոշ փողոցներում, նրան կարող է թվալ, թե ընկել է մի անգլիախոս քաղաք, որի ժողովուրդը գիտի նաև հայերեն: Որևէ օտար լեզվի նկատմամբ այսպիսի անսպասելի արտոնյալ վիճակը հակասում է լեզվի մասին օրենքին, կոպ-

տորեն ուսնահարում է մեր պետական լեզվի իրավունքն ու շահերը, վիրավորական է մեր ժողովրդի, մեր լեզվի համար: Ցավով եմ նշում, որ մեր թերթերը, փոխանակ հանդես գալու նման երևույթների դեմ, իրենք են երբեմն դնում նման հետքերով:

Մեր որոշ թերթերում շուրջ երկու տարի առաջ հատկապես ազդերի բաժնում սկսեցին հանդես գալ անգլիագիր տերմիններ, գործակալությունների անուններ, տարբեր կարգի արտահայտություններ: Այս միտումը ծավալվելով հանդեցրեց այնպիսի վիճակի, երբ զովագրը, ազդը ներկայացնում են հայերենի և անգլերենի խառնուրդ, խառը շարադրանք, ի վերջո հայերեն թերթում երբեմն հայտնվում են միայն անգլերեն ազդեր, զովագրեր: Անգլերեն կամ անգլիախառն այսպիսի հրապարակումները Հայաստանի հայերեն մամուլում շատ նման են մեր փողոցներում շռայլորեն սփռված անգլիախառն կամ անգլերեն ազդերին, զովագրերին, որոնց մասին նշվեց վերը: Սրանք, ինչպես ասում են, նույն ձեռագիրն են: Իսկ ո՞վ է այդ ձեռագրի հեղինակը, և այն ի՞նչ է տալիս զուտ զովագրալին, ազգային առումով: Այսպիսի ազդը զուտ ազգալին (առևտրական և այլն) տեսակետից ոչինչ չի տալիս ո՛չ Հայաստանի բնակչին, ո՛չ էլ ազդով ապրանք կամ աշխատանք առաջարկողին: Ամերիկացիների պես գործարար մարդիկ չեն կարող չհասկանալ, թե հայախոս Հայաստանում առևտրական զովագրն ինչ լեզվով պիտի ներկայացվի այդ նույն ժողովրդին:

Արևմտամուլությունը և մասնավորապես ամերիկամուլությունը ավերիչ ազդեցություն կունենան մեր ժողովրդի հոգեբանության վրա, կստեղծվի ստորադասի, ազգալին թե արժեքության հոգեբանական վիճակ՝ սրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Այսպիսով՝ հռչակագրով անկախության ուղին ընտրած մեր ժողովրդին նյութական, սոցիալական կախյալությունը դրսից ավելացվում է ամենավտանգավորը՝ հոգեբանական կախվածությունը: Եթե ասվածին ավելացնենք այն ամբողջ արևմտյանը, որ մեզ անընդհատ հրամցվում է հեռուստատեսությամբ, կինոթատրոններում, ռադիոյով, տեսաժապավեններով, ապա պարզ կդառնա, որ լեզվական օտարամուլությունը այս ամբողջ շղթայի ամենավտանգավոր օղակներից մեկն է, որը պետք է կանխվի:

Ցավով եմ նշում, որ մեզանում այժմ առկա օտարամուլությունը և օտարամետությունը ոչ բոլորն են ճիշտ գնահատում և զգուշանում:

Մեր որոշ թերթերում անգլերեն կամ կիսաանգլերեն ազդերի, զովագրերի երևան գալը արդարացնելու համար ոմանք փորձում են համեմատել ամերիկայում հրատարակվող հայկական թերթերի համանման փաստերի հետ: Այդ փաստերը միայն առերևույթ են իրար նման, իսկ ըստ էության տարբեր են իրենց թե՛ ծագումով և թե՛ նպատակով: Նախ նշեմ, որ այդ երևույթը առկա է ոչ միայն ԱՄՆ-ի, այլև լատինական Ամերիկայի, Ֆրանսիայի և այլ երկրների հայկական թերթերում: Նշված երևույթն ալբերկներում հայերի երկնզվության հետևանք է և արտահայտություն: Արտասահմանյան հայկական որոշ լրագրեր շատ նյութեո (պաշտոնական, ազդեր, զովագրեր և այլ) որպեսզի մատչելի դարձնեն իրենց ընթերցողներին, ստիպված են լրագրային խոսքը հարմարեցնել հայերենի նրանց իմացության աստիճանին: Այնպես որ արտերկրի հայկական մամուլում տեղ գտած այդպիսի փաստերը հարկադրական և անխուսափելի քայլեր են: Այս կապակցությամբ հիշենք, որ կան նաև ամբողջությամբ օտարալեզու կամ կիսով չափ, մասնակիորեն օտարալեզու հայկական թերթեր, որոնք սպասարկում են հայերենին բոլորովին շտիրապետող կամ մասամբ տիրապետող հայերին: Այնպես որ հայկական թերթում այս կամ այն չափով ալ լեզվին տեղ տալը (ամբողջությամբ, մասնակի) այդ նույն չափով հայերենին շտիրապետող հայերին տեղեկատվության պահանջից է բխում: Դրանում դրսևորվում է երկնզվության կամ նույնիսկ մայրենի լեզուն բոլորովին չիմանալու ցավալի իրողությունը: Այսպիսով՝ սփյուռքահայ թերթերի նշված հարկադրական փաստը չի կարելի փաստարկ դարձնել:

համանման երևույթը Մայր Հայաստանի հայերեն թերթերում տարածելու, ընդօրինակելու համար: Այդ երևույթը հակասում է մեր լեզվի, մեր ժողովրդի շահերին, մեր ազգային արժանապատվությանը:

Նորից անդրադառնալով բառական օտարաբանության դեմ պայքարի անհրաժեշտությանը՝ նշենք, որ վերջին շրջանում ՀՀ կառավարության առնթեր լեզվի պետական տեսչության հայոց լեզվի բարձրագույն խորհուրդը քննում է այս կարգի հարցեր՝ նպատակ ունենալով օտարաբանությունները փոխարինել ազգային համարժեքներով: Սա, իհարկե, դրական երևույթ է և արժանի է գնահատության: Բայց արդեն գործառուղ օտարաբան տերմիններին մեծ քանակի համեմատությամբ կատարվող այդ աշխատանքի ծավալը և հատկապես արդյունքը շատ փոքր է: Այնուհետև, այսպիսի հարցերը պետք է քննել ոչ թե օտար բառերի, սխալ տերմինների տարածումից, գործածությունից շատ հետո, այլ առ բառերի գործածության ամենասկզբնական շրջանում: Ավելին. դանկալի է ընդունել որոշակի կարգ, ըստ որի՝ այդ բառերը շրջանառության մեջ դնել լեզվի տեսչության հայոց լեզվի բարձրագույն խորհրդի հավանության արժանանալուց հետո: Անշուշտ, սա հաճախ դժվար կլինի՝ կապված տեղեկատվության աշխատանքի ժամանակաին սղության հետ: Այս հանգամանքը թելադրում է, որ ապահովվի որոշակի երկուստեք կապ՝ լեզվի պետական տեսչության և այն կազմակերպությունների, հաստատությունների, ալև անհատների միջև, որոնք համապատասխան օգնության կարիք ունեն: Տերմինաբանության բնագավառում ավելի մեծ չափով պետք է օգտագործել արևմտահայերենի ընձեռած հնարավորությունները: Մենք արդեն ունենք այդպիսի որոշ ավանդույթ: Մի շարք տերմիններ արևելահայերենի մեջ մտան արևմտահայերենից կամ լայն տարածում ստացան արևմտահայերենի ազդեցության շնորհիվ: Դրանցից են՝ նախագահ (պրեզիդենտ), նախարար, ամբողջատիրություն, դովադդ, գրոսաշրջիկ, հյուրախաղ, արտերկիր, տնօրեն (դիրեկտոր) և այլն:

Հայերենի բառագործածության բնագավառում տարածում է գտել մի անսովոր, չպատճառաբանված երևույթ: Լայնորեն տարածված հայերեն բառերը ոմանք հանում են գործածությունից փոխարինելով այլ՝ տվյալ գոծածության համար անսովոր բառերով: Որևէ բառ մի այլ բառով կարելի է փոխարինել այն դեպքում, եթե փոխարինողը փոխարինվողի համեմատությամբ ունի որոշակի առավելություններ՝ իմաստային, կիրառական և այլն: Այսպես այդպիսի փոխարինումը հակասում է լեզվի զարգացման, հարստացման, գործառական օրինաչափություններին: Մենք հրապարակավ առիթ ունենք ենք հանդես գալու այսպիսի մի շարք փաստերի վերաբերյալ, բայց ստիպված ենք նորից անդրադառնալ այդ կարգի փաստերին, քանի որ օրինաչափության խախտումները շարունակում են ծավալվել:

Այսպես, արևելահայերենում նախադաս գործածվող համառ բառը (համառ ուր դպրոց) փոխարինում են թիվ բառով (թիվ ուր դպրոց): Թիվ բառի և քանակական թվականի կապակցությամբ են արտահայտում նաև զասակա թվականի որոշակի կիրառություններ (Նրեանի երկրորդ մանկապարտեզ՝ Նրեանի թիվ երկու մանկապարտեզ, զասարանի առաջին աշակերտ՝ զասարանի թիվ մեկ աշակերտ): Քանի որ այս փաստը եզակի չէ, ավելադնենք նաև ոմակա չէ, և բնորոշ է բառեր, բառերի կիրառություններ անհանկի փոխելու միտումի առումով, ուստի արժե մի փոքր ավելի հանգամանորեն վերլուծել այս երևույթը, նրա անհիմն լինելը: Համառ բառի վերահիշյալ կիրառությունների փոխարեն թիվ բառի գործածությունը արդեն շուրջ հինգ տարվա պատմություն ունի, բայց ալժմ էլ գտնվում է գործածության սկզբնական աստիճանի սահմաններում, չի ընդլայնում իր գործածողների նեղ շրջանակը: Նույնիսկ նկատելի է գործածության շրջանակի որոշ նեղացում: Թիվ բառի նշված գործածությունը սահմանափակվում է փոքր քանակությամբ անձանց ոլորտով ու մի շարք թերթերով: Այս առումով ուշագրավ է հետևյալ խոստովանությունը: Մի անգամ մի լրագրողի հետ զրույց բաց-

վեց մեր դպրոցի և լեզվի մասին: Իմ հարցին, թե ո՞ր դպրոցում են սովորում իր երեխաները, նա պատասխանեց՝ 118-րդ դպրոցում: «Իսկ որտե՞ղ է գտնվում այդ դպրոցը» իմ հարցին պատասխանեց. «Աջափնյակում՝ համար 122 դպրոցի մոտ»: Իմ հարցը ուղղակիորեն մասնավորելով համար և թիվ բառերի իր գործածության վրա՝ ստացա հետևյալ պատասխանը. իր ոչ պաշտոնական, բանավոր խոսքում գործածում է համար բառը կամ դասական թվական, իսկ իր՝ լրագրողի գրավոր խոսքում՝ թիվ բառը, քանի որ այդպես է դրվածքը, պաշտոնական գրավոր խոսքն այդպես է:

Ի՞նչն է պատճառը, որ այդ կապակցությունը այսքան ժամանակ չի տարածվում հատկապես բանավոր խոսքում: Պատճառն այն է, որ լեզուն ունի ինքնապահպանական ներքին զորություն, որ այլ կերպ կոչվում է պահպանողականություն, որով լեզուն դիմադրում է ամեն կարգի կամայական փոփոխությունների, այնպիսիների, որոնց կարիքն ինքը չունի: Ստացվում է, որ իրենց անձնական կենդանի խոսքում այդ նորաբանությունը չեն ընդունում նույնիսկ նրանք, ովքեր իրենց լրագրային, պաշտոնական գրավոր խոսքում ստիպված դիմում են այդ «նորարարությունը»: Սա խոսողի կամքի սոսկական դրսևորման հարց չէ, այլ ավելի շատ այն օրինաչափության դրսևորում, որ լեզուն ավանդապահ է, պահպանողական է այն բոլոր դեպքերում, երբ դրա փոփոխության համար իմաստային, կառուցվածքային որևէ հիմք, որևէ անհրաժեշտություն չկա: Բառերի տեղը լեզվի համակարգում ու շարահյուսական կառուցվածքում որոշողը ինքը լեզուն է, իսկ մեր դերը նման դեպքերում սահմանափակվում է լեզվի օրինաչափությունները, լեզվի օրենքները իմանալու, հարգելու և կիրառելու պարտականությամբ: Լեզուն մեր միջամտությունը կընդունի միայն այն դեպքում, եթե ինքը դրա կարիքն ունենա, մյուս բոլոր դեպքերում նա կմերժի ամեն մի միջամտություն:

Մեր առջև ծառանում են այդ բառերի նաև այլ կիրառությունների հետ կապված հարցեր, որոնք նույն եղանակով անլուծելի են: Համար բառը իր հիշյալ իմաստով հանդես է գալիս նաև որոշ բաղադրյալ բառերում որպես բաղադրիչ՝ համարակալել, համարակալում, թվահամար: Ինչպե՞ս ենք վարվում այս բառերի հետ: Ակնհայտ է, որ թիվ բառն այստեղ չի գործածվի: Համար բառն ինքնուրույն գործածություն ունի նաև այլ կառույցներում, ինչպես՝ «Նրան տեղավորեցին հյուրանոցի երկրորդ հարկի ութերորդ համարում»: «Ինձ տվեք «նորք» հանդեսի այս տարվա առաջին երեք համարները»: Այսպիսի կառույցներում համար բառը չի կարող փոխարինվել թիվ բառով: Ինչպես տեսնում ենք, համարժեք համարվող համար և թիվ բառերից առաջինն ունի իմաստային, կիրառական շատ լայն հնարավորություններ, որպիսիք չունի թիվ բառը, իսկ հնարավոր փոխարինումների արհեստականության, անսովորության մասին խոսվել է վերը: Այս մի հատիկ փաստն այսքան մանրամասն վերլուծեցինք, որպեսզի ցույց տանք, որ լեզվում իր հաստատուն տեղն ունեցող բառի (բառաձևի) գործածությունը փոխելուց առաջ այն պետք է դիտել իր իմաստային, կիրառական համակարգի ամբողջության մեջ և նախապես որոշել այդպիսի փոփոխության հետևանքները: Լեզուն զրանից շահում է, թե՛ տուժում:

Ինչ խոսք, քաղաքական անկախությունը նոր հարաբերությունների հիմք դարձավ թե՛ մեր պետության և թե՛ մեր պետական լեզվի դործառության բնադավառնեում: Փաստացիորեն պետական լեզվի մակարդակի բարձրանալը մեր գրական լեզվի առջև դրել է նոր խնդիրներ՝ հատկապես տերմինաբանության հարստացման և դրա նոր ուղիների հետ կապված: Եթե վերջին տասնամյակներում Հայաստանն ալլ պետությունների հետ հարաբերության մեջ կարող էր մտնել Մոսկվայի միջոցով և ռուսերենով, առաջ այժմ այդ կապը տարբեր պետությունների հետ ուղղագիծ ու անմիջական բնույթ է կրում:

Ռուսերենից և ռուսերենի միջոցով այլ լեզուներից փոխառությունը կատարում էինք հիմնականում գրադարձության միջոցով, ըստ որում սովորաբար նկատի ենք ունեցել ռուսերեն գրությունը: Իսկ բառի արտասանությունը

Հիմնվում էր գրության վրա: Ինչպես՝ ռադիոֆիզիկա, էլեկտրաէներգիա (ռուսերենում էլեկտրոէներգիա ձևով), Մոսկվա, Վաշինգտոն, Պրագա և այլն: Նշենք, որ շատ դեպքերում շրջանցվել է ռուսերենի ձևը և հաշվի է առնվել բուն փոխառու լեզվի հնչյունական յուրահատկությունը և նրա լիակատար կամ մասնակի համապատասխանությունը հայերենի հետ: Ինչպես՝ Ճապոնիա (ո՛չ Յապոնիա), Ճավա (ո՛չ Յավա), Հեմինգուեյ (ո՛չ Խեմինգուեյ), Հանոյ (ո՛չ Խանոյ), Խավան (ո՛չ Տավան), Քեռեմ (ո՛չ թեորեմ), Բրիգադ (ո՛չ Բրիգադա) և այլն: Ռուսերենի միջոցով կատարված փոխառությունների հնչյունական որոշ համապատասխանեցումը բուն փոխառու լեզվի բառաձևին՝ որպես միտում, ավելի գործուն է դառնում 1960-ական թթ. սկսած:

Րնդհանուր առմամբ մեզանում մշակված էին հիմնական սկզբունքներ, որոնցով հնարավոր էր ղեկավարվել և տառադարձել փոխառյալ բառերը: Այժմ խառնաշփոթություն է առաջացել նաև տառադարձության բնագավառում: Ըստ որում, ինչպես այլ, այնպես էլ այս բնագավառներում մարդիկ կատարում են (կամ առաջարկում են կատարել) առանձին բառերի տառադարձում այս կամ այն ձևով, որի հետևանքով փոխառությունների տառադարձումը դրկվում է իր ունեցած ընդհանուր օրինաչափությունից: Ըստ որում, նկատելի է, որ միտումը գրադարձությունից անցումն է բուն տառադարձության (այսինքն առաջարկում են փոխառյալ բառի գրության հիմքում դնել ոչ թե դրությունը, այլ արտասանությունը): Դրա հետևանքով առաջանում են ամենատարբեր զուգահեռ ձևեր, անմիօրինակություններ՝ ռեյթեր, ռեյթոր, ռեյթր, ռոյթեր, ռոյթր. բրիկետ, բրիքետ, բրիքթթ. մենտալիտետ, մենթալիթետ, մինթալիթետ. մարկետինգ, մարքետինգ, մարքեթինգ և այլն:

Տառադարձության վերաբերյալ ամեն մի առաջարկ պետք է հիմնված լինի որոշակի օրինաչափության վրա: Դրա համար պետք է նկատի ունենալ, որ լեզուն մի ամբողջական համակարգ է, որը կազմված է ենթահամակարգերից, սրանք էլ իրենց ենթահամակարգերից: Սրանք, այսպես ասած, ուղղահայաց կապեր են, որոնցով արտահայտվում են իրար ստորադասվող կառուցվածքային մակարդակները: Դրա հետ միասին կան նաև հորիզոնական կապեր նույն մակարդակի կամ ենթամակարդակի ներսում: Կան նաև համակարգային այլ կապվածություններ, որտեղ խառնվում են հորիզոնական և ուղղահայաց կապերը: Այնպես որ լեզուն կանոնարկելիս ամեն մի փաստ պետք է դիտել համակարգի մեջ: Մեկն առաջարկում է բուլղերի գրադարձությունը այսուհետև տառադարձել Բալլերի ձևով (ըստ ռուսերենի արտասանության): Իսկ նա պարտավոր է այդ բառը վերցնել համանման բառերի համակարգի մեջ և պատասխանել այն հարցին, թե որքանով է նյութականահարմար առհասարակ գրադարձությունը փոխարինել տառադարձությամբ, փոխարինելիս էլ այդ օրենքը պիտի դործի այսուհետև կատարվելիք փոխառությունների՝ վրա, թե՛ հետադարձ ուժով պիտի ընդգրկի նաև անցյալում կատարված փոխառությունները: Այդ դեպքում ինչպե՞ս պիտի գրենք, այլև արտասանենք, օրինակ, Մոսկվա-ն՝ Մասկվա՞, Խսկ մոսկովյա՞ն բառը (Մոսկովյան փողոց, մոսկովյան ավանդույթներ, մոսկովյան խորհրդակցություն) և այլն:

Ուղղագրության կանոնարկումը դրական լեզվի կանոնարկման ընդհանուր համակարգում կարևոր տեղ է գրավում և ուղեկցում է գրական լեզվին նրա զարգացման ամբողջ ընթացքում՝ սկսած այբուբենի ստեղծումից մինչև վերջ: Ուղղագրության սկզբունքային, էական փոփոխությունները հաճախակի չեն կատարվում, դրանք կապվում են տվյալ լեզվի պատմական զարգացման որակական փոփոխության հետ և կարող են կատարվել ու սովորաբար կատարվում են խիստ անհրաժեշտության դեպքում: Ահա թե ինչ է դրում այդ մասին Հր. Աճառյանը. «Երբ գրվածքի և հնչման մեջ եղած տարբերությունը շատ խոշոր չէ, տանելի է. Խսկ երբ նրանք շատ մեծ չափերի են հասնում, պատճառ են դառնում մեծամեծ դժվարությունների, ... ուղղագրության բարե-

փոխությունը օրվա հարց է դառնում¹։ Այդ հարցը միակողմանիորեն լուծվեց 1922 թ., և նրա ծայրահեղությունները հայտնի չափով վերացվեցին 1940 թ.։ Բոլոր դեպքերում կարծում եմ, չի կարելի բացառել, որ ժամանակի խորհրդային Հայաստանի և հայկական սփյուռքի միջև պաշտոնական բավարար կապի ու հարաբերության դեպքում արևմտահայությունը թերևս ընդուներ 1940 թ. ուղղադրական բարեփոխությունը։ Հիշենք, որ դեռևս XIX դարի կեսերից, հատկապես երկրորդ կեսից, մեր նոր գրական լեզվի (երկու ճյուղերի) ուղղագրության բարեփոխումը օրակարգի հարց էր դարձել։ Ու թեև մամուլում գործնական խոսակցություն էր գնում մեր լեզվի երկու ճյուղերի մերձեցման և նույնիսկ միավորման վերաբերյալ, բայց դրանք գործնական արդյունքի չհանգեցրին, և արևմտահայ հատվածի պատմական ընթացքը չգնաց նպաստավոր ուղղությամբ։ արևմտահայությունը ցեղասպանության հետևանքով ցրվեց աշխարհով մեկ, և խորհրդային Հայաստանը պաշտոնապես չպահպանեց անհրաժեշտ կապ արևմտահայության հետ, չնայած ժողովրդի, նրա մշակույթի, նրա գործիչների ներքին հոգևոր կապը միշտ էլ եղել է։

Մի բան պետք է ընդունել սկզբունքորեն. 1940 թ. ուղղագրական բարեփոխությունը կատարվել է գիտական ու մանկավարժական ընդունված սկզբունքներով, և խորհրդային իշխանության օրոք կատարված այդ բարեփոխությունն իր մեջ խորհրդային գաղափարախոսության որևէ հետք չէր պարունակում և չէր էլ կարող պարունակել։ Ուղղագրության հիմքում ընկած էր երեք սկզբունք՝

1) ավանդական գրության պահպանում, թեև բառերի հնչյունների մեջ կատարվել է արտասանական փոփոխություն՝ ա) նկատի է առնվում բառավերջի, հաճախ նաև բառամիջի ձայնեղ բաղաձայնների գրության պահպանումը, թեև արդի հայերենում դրանք արտասանվում են խուլ՝ վարդ, բարդ, մարդ, առաջ, աղջիկ, արջ, բարձր, կարգ, բերդ և այլն, բ) ե-ով սկսվող բառերի ե-ով գրելը, թեև այժմ դրանք, ի տարբերություն գրաբարի, արտասանվում են յե՝ եղեն, երես, երկիր, երազ, երկու, երկար և այլն, գ) ո-ով սկսվող բառերը ո-ով գրելը, թեև դրանք արդի հայերենում, ի տարբերություն գրաբարի, արտասանվում են վո՝ ոճիր, որկոր, ոսոխ, ոստ և այլն։

2) բառերի ստուգաբանական կառուցվածքի պահպանում. մանրէ, վայրէջք, որևէ, անօրեն, ապօրինի, բնօրինակ, բնորոշ և այլն։

3) հնչյունական սկզբունք, որով պահանջվում է բառը դրել այնպես, ինչպես արտասանում ենք այժմ. ինչպես՝ ամենի, ամբոխ, ամբարտակ, ամուլ, ամուր, այգեստան, անանուխ, անաչառ, անապատ, անարգ, անարժան, անդուլ, աշակերտ, ուսուցիչ, դպրոց, հող, պատ, քար, հալը և այլն։

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, երեք սկզբունքներից առաջին երկուսը ավանդական բնույթ ունեն, այսինքն պահպանում են արդի ուղղագրության կապը ավանդականի, դասականի հետ։ Ինչ վերաբերում է երրորդ սկզբունքին, ճիշտ է, դրանք ենթարկվում են ավելի շատ բառեր, բայց դրանց մեջ կան հազարավոր բառեր, որոնց գրությունը համապատասխանում է ոչ միայն արդի, այլև ավանդական արտասանությանն ու գրությանը։

Այսպիսով՝ 1940 թ. ուղղագրական բարեփոխությունը կատարվել է այն սկզբունքներով, որոնք գոյություն ունեն ընդհանրապես լեզվաբանական գիտության մեջ, և այդ սկզբունքների կիրառումը իրեն արդարացնում է թե՛ գիտական և թե՛ մանկավարժական առումներով։ Մի կողմից ապահովվում է կապը ավանդական ուղղագրության հետ, մյուս կողմից չի կտրվում արդի հայերենից, չի հակադրվում նրան, և այդ սլատճառով էլ մեր գրության և արտասանության միջև կա զգալի համապատասխանություն։

Գործող ուղղագրության գիտական սկզբունքների համառոտ վերլուծությունը ցույց է տալիս, որ անհիմն է այն պնդումը, թե մեր ուղղագրությունը

1 2. Ա ճ ա ո յ ա ն. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6. 1971, էջ 86։

կտրված է արմատներից, ուրեմն և «պետք է վերագառնալ արմատներին»։ Արմատների, ավանդականի հետ եղածից ավելի կապը, որ կարող է լինել միայն ու միայն զրական լեզվի արդի վիճակին հակադրվելու, նրանից կտրվելու ղեկով, շունի ո՛չ դիտական, ո՛չ մանկավարժական հիմք։ Ամեն հայ ուղում է լինել, դառնալ զրադետ, տիրապետել իր կենդանի զրական լեզվին։ Բայց ոչ որ իրավունք չունի պահանջելու, պարտադրելու, որ մարդ իր լեզվին տիրապետի հին հայերենի անհաղթահարելի դժվարությունները հաղթահարելու ճանապարհով։ Եվ քանի որ դա կարող է հաջողվել շատ քչերին, ուրեմն ժողովրդի զրադետությունը լուրջ վտանգի տակ է գրվում։

Մայր Հայաստանում և շատ այլ երկրներում հայերենի գործող ուղղագրությունը վիրավորական երանդով «խորհրդային ուղղագրություն» անվանելը ոմանց ամենամեծ փաստարկն է հին վերագառնալու համար։ Գիտամանկավարժական հարցի լուծումը պահանջում է դիտամանկավարժական լուրջ մոտեցում։

Գործող ուղղագրության որոշ քննադատներ վկայակոչում են նաև լեզվական բնույթի մի երևույթ՝ համանունությունը, երբ տարբեր բառեր ձևով նույնանում են՝ պահպանելով իրենց իմաստները։ Բերում են հատկապես սեռ համանունի օրինակը, որը տարբեր բառերի արժեք ունի՝ 1. սեռ—սիրելու զգացմունքը, 2. սեռ—կաթի երեսի յուղային կուտակումը, կաթի սեռ։ Այս երկու սեռ-երը զրաբարում արտասանվում և գրվում էին տարբեր կերպ՝ սէր և սեր։ Հետագայում է և ն հնչյունները բառամիջում նույնացան, և այդ նույնացումը տեղ գտավ նաև ուղղագրության մեջ։ Այս գործընթացը լեզվի ներքին զարգացման զրսևորումներից մեկն է, որի հետևանքով առաջանում է համանունություն։ Փորձում են ապացույցել, թե իբր գրության և արտասանության համապատասխանեցման հետևանքով լեզվում առաջացել է «իմաստադրկում», «անիմաստություն» և նման այլ բաներ։

Ո՞րն է ճշմարտությունը։ Ճշմարտությունն այն է, որ համանունությունը շատ սովորական երևույթ է աշխարհի բոլոր լեզուներում, և նրա քանակը շատ լեզուներում հասնում է հազարների։ Հայերենում համանունների քանակն ավելի քան տասներկու հազար է։ Վստահորեն կարելի է ասել, որ այդ 12.000 համանուններից ոչ մեկն էլ ոչ մի հայերեն խոսողի երբեք չի խանդարել ճիշտ հաղորդելու իր մտքերը և ճիշտ հասկանալու ուրիշին թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում։ Բանն այն է, որ մարդիկ հաղորդակցվում են ոչ թե բառերի ուղիղ ձևերով՝ անկախ վերցրած, այլ՝ նախադասություններով, որոնք բառերի փոփոխված ձևերի կապակցություններ են։ Սրան ավելանում է, որ ամեն մի խոսք ունի իր իրադրությունը։ Այնպես որ ոչ մի լուրջ մարդ չի կարող կարծել, թե երբևէ միևնույն և՛ հայ պատանիներից ու աղջիկներից որևէ մեկը զեթ մի անգամ գրավոր կամ բանավոր իրեն բացատրած սերը շփոթել է կաթի սերի հետ ... ուղղագրության սլառճառով։ Հիշենք բուրբեղանգամ համանունը՝ 1. բուրբ—առաջին մատը, 2. բուրբ—ոչ սուր, 3. բուրբ—կետադրական նշան։ Կա՞ գեթ մեկը, որ շփոթի սրանց իմաստները։ Ամենաբուրբ մարդրն անգամ չի շփոթի։ Ուրեմն համանունության փաստարկը լուրջ բան չէ։

Ավանդական ուղղագրությունը վերականգնելու դեպքում թե ինչպիսի դժվար (երբեմն էլ անհաղթահարելի) վիճակի մեջ կդնենք ինքներս մեզ, մեր ժողովրդին, այլև հենց ուղղագրությունը կանոնարկողին՝ կապված ոչ միայն զրաբարյան, այլև առավելապես հետզրաբարյան շրջանի փոխառյալ ու ժողովրդախոսակցական բառերի գրության հետ,—այս և այլ հարցերի մասին ավելի մանրամասն ու հիմնավոր խոսք է ասել ակադ. Գ. Ջահուկյանը տարիներ առաջ տպած իր մի հոդվածում, որը վերջերս վերահրատարակվել է առանձին գործկուով², որին և հղում ենք մեր բնթերցողներին։

Այս ամենով հանդերձ, հայերենի երկու ճյուղերի միասնական ուղղագրությունը, ինչ խոսք, ցանկալի է և խոսքն այն մասին է, որ այդ հարցը

2 Գ. Բ. Ջահուկյան, Հարկ կա՞ արդյոք փոխել մեր ուղղագրությունը, Երևան, 1996։

լուծվի գիտական սկզբունքով, քանի որ «ուղղագրությունը գիտություն է և նրա դեմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտությունով»³։ Այս խնդիրը կապվում է նաև ժողովրդի երկու հատվածների փոխըմբռնման հետ։ Այս կապակցությամբ հարց է ծագում. եթե պատկերացնենք, որ արևմտահայությունն անցնում է մայր հայրենիքում գործող ուղղագրությանը, ի՞նչ դժվարություններ կարող են ծագել։ Այս դեպքում կարող է առաջանալ հոգեբանական բարդույթ. դա էլ կվերաբերի միայն ներկա սերնդին։ Բուն ուղղագրական կարգի դժվարություններ այս դեպքում չեն լինի, քանի որ նոր ուղղագրությանն անցնելիս, ինչը որ արևմտահայի համար նորություն պիտի լինի, այդ բոլոր դեպքերում գրությունը համապատասխանում է արտասանությանը։ Արևմտահայն այլևս չի մտածի, որ արմատական է (ե) հնչյունը, օրինակ սէր, տէր բառերում պետք է գրի է, իսկ գետ, հետ բառերում՝ ե, որ թեև արտասանում է առյուծ, հաբյուր, հալքություն, բայց պարտավոր է գրել առիւն, հաբիւր, յաղթութիւն, որ թեև արտասանում է գուլն, նուլն, բայց պետք է գրի գուլն, նուլն, որ միևնույն ձայնավորը խօսէ, զօղել բառերում պիտի գրի օ, իսկ ախոյան, արոո, ալոջ բառերում՝ ո, որ բառավերջի ա-ից, ո-ից հետո թեև չ չի լսվում, բայց պարտավոր է գրել բառերի մեծ մասում, և ապա պարտավոր է անգիր հիշել այն բառերը, որոնք բացառություն են կազմում։ Իսկ արևելահայերենի ուղղագրության դեպքում այս և նման բազմաթիվ կանոններ սովորելու և հարյուրավոր բացառություններ անգիր հիշելու փոխարեն միայն մի բան պետք է իմանա՝ այդ կարգի բոլոր բառերը գրել այնպես, ինչպես արտասանվում են։

Թող սա շրիտվի որպես բարոյահոգեբանական ճնշում՝ մեր արևմտահայ բույրերին ու եղբայրներին ուղղված։ Նրանց համար իմ ասածը բնավ նորություն չէ։ Բայց մի բան պարզ է. մենք պետք է կարողանանք, պետք է մեր մեջ ուժ գտնենք հաղթահարելու հատվածական հոգեբանությունը։ Որ մեր ժողովրդի համար մեկ միասնական ուղղագրությունը ցանկալի է, կասկածի ենթակա չէ։ Կարևոր է, որ այդ հարցը լուծվի ժողովրդավարական ու համագլխի հոգեբանության մթնոլորտում ու պայմաններում։ Այդ հարցի քննարկման համար ցանկալի է կազմակերպել համահայկական խորհրդակցություն, որին մասնակցեն Մայր հայրենիքի և սփյուռքի հայություններ կայացուցիչները։

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ РАЗВИТИЯ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Академик НАН РА С. Г. АБРААМЯН

Р е з ю м е

Армянский язык имеет все необходимые данные для того, чтобы выполнять функцию государственного языка нашей ставшей независимой республики: богатую лексику, разработанную терминологию, гибкую грамматическую структуру, действенные устойчивые закономерности, присущие литературному языку. На нынешнем этапе задач армянских лингвистов (и не только лингвистов) является сохранение достижений и богатства нашего языка и содействие его дальнейшему обогащению и развитию. В статье кратко представлены новые положительные сдвиги, происшедшие в период нашей независимости. Анализируется ряд явлений, которые не способствуют развитию и обогащению языка, например, большое количество новейших неоправданных заимствований (с английского языка), факты игнорирования законов словоупотребления, грамматики, нарушения орфографии. Мотивируя свою позицию тем, что желательно иметь единую орфографию для обеих частей армянского литературного языка, некоторые просто ставят вопрос об отказе от восточно-армянской орфографии. Мы придерживаемся того мнения, что орфография связана с грамотностью всего народа, следовательно, этот вопрос может быть решен только посредством всенародного обсуждения.

³ Հ. Թրևանյան. Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 139։